

յամի Տեառն 1630... հանդերձ քահանայիւք, սրոց աւագերէց էր տէր Զաքարիա»¹⁸. իրեն հետ էին Անտոն Սարաֆովիչ, Ոնոփրիոս Խաչերեսովիչ, Զոսիմոս սարկաւազ, Ստեփանոս Յակոբովիչ եւն: Իսկ Ստեփանոս Ռոչքա երկրորդ անգամ պահանջուած դաւանութիւն մ'ականարկելով կ'արձանագրէ իւր ժամանա-

¹⁸ Զաքարիա աւագերէցի մասին կը գրէ Մկրտիչ զրիչ որդի Ղազարի էջմ. 778 Կանոնադրքին Յիշատակարանին մէջ, գրուած 1635ին ի Լվով. «Յանկացող եղեւ... աստուածասէր եւ բարեպաշտ... եւ ախոյեան հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ տէր Զաքարիայ Լովա քաղաքի աւագ քահանայն, որդի տէր Գասարնոյն քաղաքի աւագերիցու. որ եւ սա ամենայն բարեմեւութեամբ հովուէր զհաւտ Քրիստոսի ի կեանս իւրում. եւ կատարեալ ալեւաք վճարեաց զկեանս իւր... Բայց զրեցաւ սա ի հարացեալ եւ ի բազմահալած ժամանակս, որ էր վասն ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ, ի քաղաքն Լով կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին... Դարձեալ... որ կարդալով օգտիք եւ կամ աւրինակէք ի սմանէ, մի մոռանայք յիշել ի Քրիստոս զյառաջանուանեալ տէր Զաքարիայն, որ բազում աշխատութեամբ եւ քատագովութեամբ պարգեաց եւ սրբագրեաց գկանոնս: Եւ յաւելելալ ի նոյն՝ ցանկ գեղեցիկ նորայարմար ի վերայ այրութեանի, վասն դիւրաւ գտանելոյ կամեցողին զխրնդրելին իւր: Այլ եւ զպարկեշտ եւ հեղահոգի զկենսակիցն իւր Կուլաֆ խաթունն. եւ զբողոքեալ զաւակքն իւրեանց զԱնդրէասն եւ զԽաչքոն, զԳասարն եւ զԳրիգորն: Եւ զԳասերքն՝ զԱննան, զՍոփիայն եւ զԿատարինէն: Այլ եւ զվերափոխեալ հայրն իւր զտէր Գասար աւագէրէցն եւ զմայրն իւր Անաստասիայն եւ ի Քրիստոս հանդուցեալ զեղբայրն իւր զՍտեփաննոսն եւ զմեւս զկենդանի եղբայրն իւր զԴարիէլն. եւ զբւերքն իւր՝ զՈւրիանն: Եւ զԵղիստրէթ, եւ զամենայն արեան մերձաւորն»: Զաքարիա վախճանած կ'երեւայ յընթացս 1635 տարւոյն, ձեռագրեալ օրինակութեան աւարտելէն (21 Դեկտ. 1635) յառաջ: Մկրտիչ զրիչ վկայութեամբ սոյն Զաքարիա աւագերէցին զործն է Կանոնադրոց սկիզբը տեսնուած Նիւքեթու այրութեանական ցանկը: